



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ք. Երևան, Ս. Դավթի 87ա

<< 18 >> հունիսի 2021թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ No. 1462 /16 Ա

Դրոշմանիշային վճարի գծով չկատարված պարտավորությունները գանձելու մասին

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության պետ Արման Մնացականյանս, քննարկելով Ա/Ձ Հակոբ Դերմենջյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը,

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

Համաձայն եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական, շահութահարկի տարեկան, միկրոձեռնարկատիրության սուբյեկտի իրացման շրջանառության վերաբերյալ հաշվարկների՝ Ա/Ձ Հակոբ Դերմենջյանի (ՀՎՀՀ՝ 66871476, հասցե՝ Լոռու մարզ, ք. Վանաձոր, Տարրոն 2 ՔԾՀ 4 57 1, պետ. գրանցման համարը՝ 26.04983) նկատմամբ 08.06.2021թ. հարուցված վարչական վարույթի շրջանակներում դրոշմանիշային վճարի գծով գանձման ենթակա պարտավորությունը կազմում է 61.000 դրամ:

Վերոհիշյալ պարտավորության մասով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչությունում, համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի, հարուցվել է վարչական վարույթ չկատարված դրոշմանիշային վճարի գծով պարտավորությունը գանձելու վերաբերյալ՝ վարչական ակտ ընդունելու նպատակով, որի մասին հարկ վճարողը պատշաճ կերպով ծանուցվել է, սակայն չի ներկայացել վարույթի նյութերին ծանոթանալու համար և որևէ բացատրություն չի տվել:

Վերոնշյալ պարտավորությունից 3.000 դրամն առաջացել է 2021թ մայիս ամսվա եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական հաշվարկից, որը սույն որոշմամբ ենթակա չէ գանձման:

Արդյունքում սույն որոշմամբ գանձման ենթակա օրենքով սահմանված ժամկետում չկատարված դրոշմանիշային վճարի գծով պարտավորությունը կազմում է 58.000 դրամ, որն առաջացել է 2020թ. ապրիլ-դեկտեմբեր, 2021թ հունվար-ապրիլ ամիսների եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական, 2019թ. շահութահարկի տարեկան, 2020թ. միկրոձեռնարկատիրության սուբյեկտի իրացման շրջանառության վերաբերյալ հաշվարկներից:



Վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով ՀՀ հարկային օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասին 64-րդ, 66-րդ կետերով, «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ մասով, «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի 13, 14, 15 հոդվածներով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55, 56, 58, 59, 88 հոդվածներով,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Ա/Ձ Հակոբ Դերմենջյանից գանձել 58.000 դրամ դրոշմանիշային վճարի գծով պարտավորության գումար:
2. Սույն որոշումն օրենքով սահմանված ժամկետում անբողոքարկելի դառնալուց հետո ուղարկել կատարման ՀՀ ԱՆ ՀԿ ապահովող ծառայություն:
3. Որոշման օրինակը եռօրյա ժամկետում ուղարկել հարկ վճարողին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59 հոդվածով սահմանված կարգով՝ իրազեկելուն հաջորդող օրվանից:
5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական մարմին՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70, 71 հոդվածներով սահմանված կարգով, ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում կամ ՀՀ վարչական դատարան:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ



ԱՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ՝

Հարկ վճարողի չկատարված պարտավորությունների գանձման վերաբերյալ հարկային մարմնում առկա մեկից ավելի վարույթների շրջանակներում ընդունված և ուժի մեջ մտած որոշումներով գանձման ենթակա ընդհանուր պարտավորությունը 1.500.000 ՀՀ դրամ գումարը գերազանցելու դեպքում, որոշումներն ուժի մեջ մտնելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում հարկային պարտավորությունների վճարման անհնարինության վերաբերյալ բավարար ապացույցներ ներկայացվելու դեպքում, եթե դրանք ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից կհամարվեն հիմնավոր, հարկային մարմինը ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված արգելադրման գործընթաց չի իրականացնի:



ՀՀ ՊԵՏԱԿԱՆ
ԵՎԱՄՈՒՏՆԵՐԻ
ԿՈՄԻՏԵ

0015, Երևան, Մ. Խորենացու 3,7 Հեռ. +374 60 54 46 57
Կայք՝ www.petekamutner.am Էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am